

Թեամբ եւ իմաստութեամբ հովուեալ հօտին, յետ մահուանն դարձեալ աղօտանայ դահն, եւ յաջորդն Բաբկէն կարգուրաց լեալ՝ կին ածէ: Ստեփանոս յելս ԺԲ դարու դտաւ ի ժողովին Հռոմկլայ: Յովհաննէս յաջորդ նորա՝ շինէ զեկեղեցին մեծ ի Պամշի վանս, զոր յաջորդէ եղբայր իւր Ներսէս յամին 1235, որք ի նոյն վանս նստան, հալածեալք ի բռնակալաց Գանձակայ, ուր փոխադրեալ էր աթոռ նախորդաց իւրեանց: Սա օրհնեաց զհոյակապ տաճարն Գանձասարայ եւ հանգեաւ ի 1262: Սմա յաջորդեաց Տէր Ստեփանոս, այլ զդար մի եւ աւելի յաջորդութիւնք ոչ ուրեք նշանակին անընդհատ, բայց այսր եւ անդր յարձանաց եւ յիշատակաց ժողովին, (զոր եւ ի ներքոյս դրոշմեսցուք). իսկ աթոռն առ սոքօք Թուի դարձեալ ի Գանձակ հաստատեալ, իսկ ի միւսում դարու (ԺԵ) ի Ճալեթ, ուր են տապանք վախճանելոցն յայնմ դարու, եւ յետ այնորիկ ի Գանձասար փոխադրեալ մինչեւ ի բարձումն կաթողիկոսական պատուոյն յամին 1813, եւ հաստատութեան մետրապոլտաց ի Շուշի:

Ի բարձման կաթողիկոսական անուան, մետրապոլիտն Աղուանից համարեցաւ ընդ բարձրագոյն Թեմս կաթողիկոսին Հայոց Էջմիածնայ, ազատ եւ ինքնազուլու զուով յառաջագոյն, այլ զձեռնադրութիւն միայն յաճախ ի Հայոց կաթողիկոսէն առնելով, որպէս եւ յանձն առին Աղուանք անդստին ի սկզբանէ Ը. դարու ի ժողովին Եղիայի, յորում ի ձեռնարկն զոր ետուն նմա՝ ասեն. «Եւ վասն ձեռնադրութեան կաթողիկոսութեան մերոյ նախկին յերուսաղեմէ ընկալան ցտուրբն Գրիգորիս, եւ անտի ցայժմ յեպիսկոպոսաց մերոց առնուին. իսկ այժմ անփորձ եւ անընտրող դործովք եղեւ եւ հերձուածեցաւ աշխարհս, վասն որոյ պայմանեցաք առաջի Աստուծոյ եւ ձերոյ հայրապետութեանդ, թէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի, միաբանութեամբ աշխարհիս, եւ Հայոց աթոռոյն ձեռնադրութիւնն յԱղուանից աթոռակալէն լիցի, զի այս երիցագոյն է քան զՀայոցդ: Եւ յայսմ պայմանէ մի լիցի իշխանութիւն ումեք արտաքոյ ելանել եւ այլաձեւս ինչ առնել»⁸¹:

Յետ կարգի կաթողիկոսացդ արժան էր կարգել եւ զեպիսկոպոսական Աթոռոյն, զոր սակաւս գտանեմք յիշատակեալ, թէպէտեւ անճահս իմն ասէ պատմիչ պատերազմին Դաւթի Անհողնի ընդ Ապուստուարայ, ի սկիզբն ԺԱ դարու, եթէ Յովսեփայ կաթողիկոսի տարեալ իցէ ընդ իւր ի բանակն զեպիսկոպոսունս Աղուանից 200 թուով⁸², ուր ի գիրս, ի ձեռնարկս ժողովոյ եւ ի պատմութիւնս, ի զանազան դարս՝ ոչ աւելի քան զ20 գտանեմք աթոռս Աղուանից եպիս-

կոպոսաց, եւ շատք յայնցանէ ի Հայոց Աղուանս, եւ են այսոքիկ. Պարտաւ, Կապաղակ, Հաչէ կամ Հրոշ, Շաքէ, Բալասական, Բախաշատ (°), Մեծկունիք, Մեծիրանք, Ամարաս, Ուտուփոր, Գարդման, Կողթ եւ Շամքոր, Շամիրամաձոր, Կաբրի, Յուի (Լիւնաց) եւ յետոյ Գանձակ. եւ ի վերջին դարս Գոշայ աթոռ, Դիզակ եւ Վառանդին, որոց աթոռակալք տեսցին յիւրաքանչիւր տեղիս: Եւ մեք մատիցուք ի նկարագիր երկրիս Աղուանից ըստ այժմեան հանգամանաց եւ վիճակաց, զոր ի սկզբան յիշեցաք:

81. ԿՂԿՏ. էջ 242:

82. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 94: